

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. մարտի 11-ին՝ ժամը 17.00-ին Դարպասի համայնքապետարանի համայնքի
ղեկավարի աշխատասենյակում կայանալիք համայնքի ավագանու արտահերթ
նիստի
ժամը՝ 17.00

1. Դարպաս համայնքի ավագանու 2020թ. մարտի 11-ի արտահերթ նիստի օրակարգը
հաստատելու մասին:

զեկ. Ա.Ալոյան

2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն
հատկացնելու մասին:

զեկ. Ա.Ալոյան

3. Դարպաս համայնքի «Ճանապարհային պատվածքի և ծածկի ամբողջական
վերանորոգում/ կառուցում» սուբվենցիոն ծրագրին հավանություն տալու մասին:

զեկ. Ա.Ալոյան

4. Դարպաս համայնքի ավագանի Գոռ Սիմոնյանի լիազորությունները
դադարեցնելու մասին:

զեկ. Ա.Ալոյան

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի ԱՐՏԱՀԵՐԹ
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 17-րդ հոդվածի դրույթներով.

Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Դարպաս համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 11-ի արտահերթ նիստի օրակարգը:

1. Դարպաս համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 11-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

3. Դարպաս համայնքի «Ճանապարհային պատվածքի և ծածկի ամբողջական վերանորոգում/ կառուցում» սուբվենցիոն ծրագրին հավանություն տալու մասին:

4. Դարպաս համայնքի ավագանի Գոռ Սիմոնյանի լիազորությունները դադարեցնելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԴՈՆԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ
ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 03-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 18-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԴՈՆԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի ավագանու

2020 թվականի մարտի 11-ի N 9-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Ալոյան Գեղեցիկ Մամբրեյի- 30000 (երեսուն հազար) դրամ / սոց. օգնություն/

Ընդամենը՝ 30000 (երեսուն հազար) դրամ:

Դարպաս համայնքի ղեկավար՝

Արմեն Ալոյան

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ
«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՎԱԾՔԻ ԵՎ
ԾԱԾԿԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ/ԿԱՌՈՒՑՈՒՄ»
ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ փողոցների վերանորոգման / կառուցման խնդիրն ընդգրկված է Դարպաս համայնքի հնգամյա զարգացման ծրագրում՝ Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

Տալ հավանություն ՀՀ կառավարության 31.01.2019թ. թիվ 62-Ն որոշմամբ հաստատված կարգով ներկայացված «Դարպաս համայնքի ճանապարհային պատվածքի և ծածկի ամբողջական վերանորոգում/ կառուցում» սուբվենցիոն ծրագրի հայտին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԴՈՆԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ԳՈՌ
ՍԻՄՈՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝
Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1.Դադարեցնել Դարպաս համայնքի ավագանի՝ Գոռ Սիմոնյանի լիազորությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԴՈՆԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ